**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 29-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ**

<<29>> փետրվարի 2024 թ. քաղաք Մարալիկ

2024 թվականի փետրվարի 29-ին, ժամը $15^{30}$ -ին Անիի համայնքապետարանի վարչական շենքի ավագանու նիստերի դահլիճում տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու հերթական նիստը:

Նիստը վարում էր՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար, ավագանու անդամ՝ Արման Սարիբեկյանը:

Զեկուցողը նշեց, որ <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի, համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 18-ի N 7-Ա որոշման և ավագանու կանոնակարգի համաձայն Անի համայնքի ավագանու նստաշրջանների գումարման համայնքի ավագանու հերթական նիստերի անցկացման օր է սահմանված յուրաքանչյուր ամսի վերջին հինգշաբթին, այսինքն այսօր:

<<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 63-րդ հոդվածի համաձայն, ավագանու հերթական նիստից մեկ շաբաթ առաջ հրապարակվել է ավագանու այսօրվա նիստի օրակարգի նախագիծը՝ նշելով նիստի անցկացման վայրը և ժամանակը: Այդ տեղեկությունները փակցվում են համայնքի ղեկավարի և ավագանու նստավայրում, տարածվել է զանգվածային լրատվության միջոցներով, տեղադրվել է մարզպետարանի և համայնքի պաշտոնական համացանցային կայքերում և հրապարակային ծանուցումների www.Azdarar.am կայքում:

Զեկուցվեց, որ Անի համայնքի ավագանու 21 անդամներից, համայնքի ավագանու հերթական նիստին մասնակցում են **<<Քաղաքացիական պայմանագիր>> կուսակցության ավագանու 11 անդամները՝**

1. ԱՐՄԱՆ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ,
2. ԷԴԳԱՐ ՍԱՂԱԹԵԼՅԱՆԸ,
3. ՌՈՒԶԱՆՆԱ ԱՐՇԱԿՅԱՆԸ,
4. ԷԴԻԿ ՈՒՌՈՒՏՅԱՆԸ,
5. ԱՐՏԱԿ ՇԱՔՈՅԱՆԸ,
6. ՀԱՍՄԻԿ ՁԱՏԻԿՅԱՆԸ,
7. ԳԱԳԻԿ ԹԱԹԵՎՈՍՅԱՆԸ,
8. ԳՈՌ ԱՂԱԲԵԿՅԱՆԸ,
9. ԺԻՐԱՅՐ ԱԼԵՔՅԱՆԸ,

10. ՆԱԻՐԱ ՍԱՐՈՅԱՆԸ,

11. ՄԵՐՐԻ ԵՆՈՔՅԱՆԸ:

**<<ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔ>> ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ավագանու մեկ անդամ՝**

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ:

Համայնքի ավագանու նիստին ներկա են Անիի համայնքի ղեկավարի տեղակալները, համայնքապետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարները, աշխատակիցներ, համայնքի բնակավայրերի վարչական ղեկավարներ, համայնքային ենթակայության կազմակերպությունների ղեկավարներ, համայնքի ներկայացուցիչներ:

Անհարգելի կարգով բացակայում են՝

**<<ԱԶԳ-ՀԱՄԱՅՆՔ>> ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔԻ ավագանու 7 անդամները՝**

1. ԳԵՎՈՐԳ ՂԶՐՈՅԱՆԸ,
2. ՍՈՍ ԳԵՎՈՐԳՅԱՆԸ,
3. ԿԱՐԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԸ,
4. ԱՐՍԵՆ ՎԱՐՈՍՅԱՆԸ,
5. ԼՈՒԻԶԱ ՎԱՐԺԱՊԵՏՅԱՆԸ,
6. ԱՐՄԵՆ ՆԻԿՈՅԱՆԸ,
7. ԼԻԱՆՆԱ ԲԱԼՈՅԱՆԸ,

**<<ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔ>> ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ավագանու անդամ**

ԱՆԱՀԻՏ ԽԱՉԱՏՐՅԱՆԸ:

**<<ԻՄ ՀԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ>> ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ավագանու անդամ՝**

ԱՐՄԵՆԱԿ ՄԵԼՈՅԱՆԸ:

Զեկուցողը հայտարարեց, որ դրանով հանդերձ, ավագանու նիստի քվորումը ապահոված է, համայնքի ավագանու հերթական նիստը հայտարարվեց բացված:

Զեկուցողը համայնքի ավագանու նիստի քննարկմանը ներկայացրեց ավագանու հերթական նիստի օրակարգը՝

1) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 29-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

2) <<ԱԶԳ-ՀԱՄԱՅՆՔ>> ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ ԸՆՏՐՎԱԾ ԼԻԱՆՆԱ ՅՈՒՐԻԿԻ ԲԱԼՈՅԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱԴԱՄԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

3) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ, ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑԵԼՈՒ ԴԻՄԱՑ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 24-Ի N 25-Ն ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

4) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 12-Ի N 20-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

5) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N 109-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

6) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՄՈՒՇԵՂ ՍԱՂԱԹԵԼՅԱՆԻ ԽՆԱՄԱԿԱԼ ՍԵՎԱԴԱ ՍԱՂԱԹԵԼՅԱՆԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

7) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՎՃԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՔԱՂԱՔԱՑԻ ԳՐԻԳՈՐ ԱՇՈՏԻ ԱՐԳԱՐՅԱՆԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

8) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N 108-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

9) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 10-Ի ՕՐԻՆԱԿԱՆ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏԱԾ ՎՃՌՈՎ /ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾ՝ ՇԴ3/1834/02/20/ ՔԱՂԱՔԱՑԻ ԳԱԳԻԿ ՌԱՖԻԿԻ ԱՂԲԱՐՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉՎԱԾ ՄԱՐԶ ՇԻՐԱԿ, ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔ, ՔԱՂԱՔ ՄԱՐԱԼԻԿ, ՆՈՐ ԹԱՂԱՄԱՍ, 5-ՐԴ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 145 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՆԿՈՒՂԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ 08-003-0022- ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0,06000 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՔԱՂԱՔԱՑԻ ԳԱԳԻԿ ՌԱՖԻԿԻ

ՂԱԲԱԲՅԱՆԻՆ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ
/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

10) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻ՝ ԱՐԱ ԺՈՐԱՅԻ ՀՈՎՍԵՓՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ, ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՕԺԱՆԴԱԿ ԱՎՏՈՏՆԱԿԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ, ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ
/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

11) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻ՝ ՊԱՐՈՒՅՐ ԱՂԱՍՈՒ ՆԻԿՈՂՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ, ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՕԺԱՆԴԱԿ ԱՎՏՈՏՆԱԿԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ, ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ
/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

12) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻ՝ ԱՆԱՀԻՏ ՍՈՒՐԵՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ, ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՕԺԱՆԴԱԿ ԱՎՏՈՏՆԱԿԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ, ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ
/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

13) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 29-Ի ՕՐԻՆԱԿԱՆ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏԱԾ ՎՃՌՈՎ /ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾ՝ ՇԴ3/0041/02/13/ ՔԱՂԱՔԱՑԻ ԳԱԳԻԿ ՀՐԱՆՏԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉՎԱԾ ՄԱՐԶ ՇԻՐԱԿ, ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔ, ՇԻՐԱԿԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐ, 4-ՐԴ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 33/2 ՀՈՂԱՄԱՍ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՃԱՇԱՐԱՆԻ ՇԵՆՔԻ ¼ ՄԱՍԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ 08-090-0016- ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0,00927 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՔԱՂԱՔԱՑԻ ԳԱԳԻԿ ՀՐԱՆՏԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ
/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

Համայնքի ավագանու նիստի օրակարգի 6-8-րդ հարցերը օրակարգում ընդգրկելու համա

առաջարկությունը ներկայացվեց <<Քաղաքացիական պայմանագիր>> կուսակցության ավագանու անդամների կողմից:

Քվեարկության կողմ՝ 12, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ավագանու օրակարգը ընդունվեց:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 29-Ի ՀԵՐԹԱԿԱ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով.

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2024 թվականի փետրվարի 29-ին ժամը 1530-ին Անիի համայնքապետարանի վարչական շենքի նիստերի դահլիճում կայանալիք ավագանու հերթական նիստի հետևյալ օրակարգը՝

1) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 29-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

2) <<ԱԶԳ-ՀԱՄԱՅՆՔ>> ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ ԸՆՏՐՎԱԾ ԼԻԱՆՆԱ ՅՈՒՐԻԿԻ ԲԱԼՈՅԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱԴԱՄԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

3) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ, ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑԵԼՈՒ ԴԻՄԱՑ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 24-Ի N 25-Ն ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

4) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 12-Ի N 20-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

5) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N 109-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

6) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՄՈՒՇԵՂ ՍԱՂԱԹԵԼՅԱՆԻ ԽՆԱՄԱԿԱԼ ՍԵՎԱԴԱ ՍԱՂԱԹԵԼՅԱՆԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

7) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՎՃԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՔԱՂԱՔԱՑԻ ԳՐԻԳՈՐ ԱՇՈՏԻ ԱԲԳԱՐՅԱՆԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

8) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N 108-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

9) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 10-Ի ՕՐԻՆԱԿԱՆ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏԱԾ ՎՃՌՈՎ /ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾ՝ ՇԴ3/1834/02/20/ ՔԱՂԱՔԱՑԻ ԳԱԳԻԿ ՌԱՖԻԿԻ ԱՂԱԲԱԲՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉՎԱԾ ՄԱՐԶ ՇԻՐԱԿ, ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔ, ՔԱՂԱՔ ՄԱՐԱԼԻԿ, ՆՈՐ ԹԱՂԱՄԱՍ, 5-ՐԴ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 145 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՆԿՈՒՂԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ 08-003-0022- ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0,06000 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՔԱՂԱՔԱՑԻ ԳԱԳԻԿ ՌԱՖԻԿԻ ԱՂԱԲԱԲՅԱՆԻՆ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

10) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻ՝ ԱՐԱ ԺՈՐԱՅԻ ՀՈՎՍԵՓՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ, ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՕԺԱՆԴԱԿ ԱՎՏՈՏՆԱԿԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ, ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

11) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ

ԱՄԱՍՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻ՝ ՊԱՐՈՒՅՐ ԱՂԱՍՈՒ ՆԻԿՈԼՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ, ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՕԺԱՆԴԱԿ ԱՎՏՈՏՆԱԿԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ, ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

12) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻ՝ ԱՆԱՀԻՏ ՍՈՒՐԵՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ, ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՕԺԱՆԴԱԿ ԱՎՏՈՏՆԱԿԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ, ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

13) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 29-Ի ՕՐԻՆԱԿԱՆ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏԱԾ ՎՃՌՈՎ /ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾ՝ ՇԴ3/0041/02/13/ ՔԱՂԱՔԱՑԻ ԳԱԳԻԿ ՀՐԱՆՏԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉՎԱԾ ՄԱՐԶ ՇԻՐԱԿ, ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔ, ՇԻՐԱԿԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐ, 4-ՐԴ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 33/2 ՀՈՂԱՄԱՍ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՃԱՇԱՐԱՆԻ ՇԵՆՔԻ ¼ ՄԱՍԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ 08-090-0016- ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ" ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0,00927 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՔԱՂԱՔԱՑԻ ԳԱԳԻԿ ՀՐԱՆՏԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

<u>Օրակարգ-2</u>

**2) <<ԱԶԳ-ՀԱՄԱՅՆՔ>> ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ ԸՆՏՐՎԱԾ ԼԻԱՆՆԱ ՅՈՒՐԻԿԻ ԲԱԼՈՅԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

Զեկուցողը նշեց, որ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության Անիի անձնագրային խմբի ղեկավարի 2024 թվականի փետրվարի 26-ի N 8/17-162 գրությամբ Անիի համայնքապետարան պաշտոնական տեղեկատվություն է ստացվել, որ <<ԱԶԳ-ՀԱՄԱՅՆՔ>> կուսակցությունների դաշինքից Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու անդամ

Անիի համայնքի հաշվառումից և
...րված Լիաննա Յուրիկի Բալոյանը դուրս է գրվել Անիի համայնքի հաշվառումից և ...աշվառվել է քաղաք Երևան, Մալաթիա-Սեբաստիա, Իսակովի փողոց 42/1 շենք, բնակարան 51 հասցեում:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու ընտրական

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու ընտրական իրավունքը կորցնելու հիմքով, որոշման նախագծով նախատեսվում է վաղաժամկետ դադարեցնել <<ԱԶԳ-ՀԱՄԱՅՆՔ>> կուսակցությունների դաշինքից Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու անդամ ընտրված Լիաննա Յուրիկի Բալոյանի ավագանու անդամի լիազորությունները:

Որոշման ընդունումը կարգավորվում է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի և 70-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի դրույթներով:

Քվեարկության կողմ՝ 12, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով որոշումն ընդունվեց:

## <<ԱԶԳ-ՀԱՄԱՅՆՔ>> ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ ԸՆՏՐՎԱԾ ԼԻԱՆՆԱ ՅՈՒՐԻԿԻ ԲԱԼՈՅԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի, 70-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության Անիի անձնագրային խմբի ղեկավարի 2024 թվականի փետրվարի 26-ի N 8/17-162 գրությունը՝ <<ԱԶԳ-ՀԱՄԱՅՆՔ>> կուսակցությունների դաշինքից Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու անդամ ընտրված Լիաննա Յուրիկի Բալոյանի՝ քաղաք Երևան, Մալաթիա-Սեբաստիա, Իսակովի փողոց 42/1 շենք, բնակարան 51 հասցեում հաշվառված լինելու մասին.

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու ընտրական իրավունքը կորցրել հիմքով, վաղաժամկետ դադարեցնել <<ԱԶԳ-ՀԱՄԱՅՆՔ>> կուսակցությունների դաշինքից Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու անդամ ընտրված Լիաննա Յուրիկի Բալոյանի ավագանու անդամի լիազորությունները:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար Ա. Սարիբեկյանին. Սույն որոշումը յոթ աշխատանքային օրվա ժամկետում ուղարկել թիվ 33 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

<u>Օրակարգ-3</u>

**3) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ,**

ԽԱՆԻԶՄՆԵՐԻ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՏՈՒՑԵԼՈՒ ԴԻՄԱՑ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 24-Ի N 25-Ն ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/Հարգելի գործընկերներ.

Զեկուցողը նշեց, որ որոշման ընդունումը կարգավորվում է <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 37-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով և հաշվի առնելով համայնքի սեփականությունը հանդիսացող տրանսպորտային միջոցների, մեխանիզմների և սարքավորումների միջոցով համայնքի բնակչությանը և կազմակերպություններին վճարովի ծառայություններ մատուցելու պահանջարկը: Սա համայնքի բյուջեին կարող է ապահովել լրացուցիչ եկամուտներ:

Զեկուցողը նշեց, որ որոշման նախագիծը և հավելվածը բաժանված է Ձեզ: Եթե որոշման նախագծի վերաբերյալ կան առաջարկություններ և դիտողություններ խնդրում եմ ներկայացնել:

Ավագանու անդամներ՝ Նաիրա Սարոյանի և Ռուզաննա Արշակյանի կողմից առաջարկություն ներկայացվեց՝ համայնքի հանրակրթական դպրոցների կարիքների համար տրանսպորտային միջոցների ծառայություններից օգտվելու դիմաց սահմանել 50 տոկոս զեղչ:

Առաջարկությունն ընդունվեց համայնքի ավագանու կողմից:

Քվեարկության կողմ՝ 9, դեմ՝ 3, ձեռնպահ՝ 0 արդյունքներով որոշումն ընդունվեց:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ, ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑԵԼՈՒ ԴԻՄԱՑ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 24-Ի N 25-Ն ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 37-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությունը հանդիսացող տրանսպորտային միջոցների, մեխանիզմների և սարքավորումների միջոցով համայնքի բնակչությանը և կազմակերպություններին ծառայություններ մատուցելու պահանջարկը.

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է**

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությունը հանդիսացող տրանսպորտային միջոցների, մեխանիզմների և սարքավորումների միջոցով համայնքի բնակչությանը և կազմակերպություններին ծառայություններ մատուցելու դիմաց 2024 թվականի համար գանձվող վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2023 թվականի մայիսի 24-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությունը հանդիսացող տրանսպորտային միջոցների, մեխանիզմների և սարքավորումների միջոցով ծառայություններ մատուցելու դիմաց 2023 թվականի համար գանձվող վճարների դրույքաչափերը սահմանելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2021 թվականի ապրիլի 5-ի N 28 որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին>> N 25-Ն որոշումը:

3. Սույն որոշման հավելվածի 4-րդ և 5-րդ կետերում նշված տրանսպորտային միջոցներով Անի համայնքի հանրակրթական դպրոցների համար մատուցվող ծառայությունների դիմաց սահմանված դրույքաչեփերի նկատմամբ կիրառվում է 50 /հիսուն/ տոկոս զեղչ:

4. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Հավելվածը կցվում է արձանագրությանը:

<u>Օրակարգ-4</u>

**4) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 12-Ի N 20-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

Զեկուցողը նշեց, որ որոշման ընդունումը կարգավորվում է <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 37-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով:

Համայնքի ավագանու 2023 թվականի մայիսի 12-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց 2023 թվականի համար գանձվող վճարների դրույքաչափերը սահմանելու մասին>> N 20-Ա որոշմամբ ծառայությունների դիմաց 2023 թվականի համար գանձվող վճարների դրույքաչափերում ավելացել է <<Համայնքների տարածքում տեղակայված անշարժ գույքի՝ յուրաքանչյուր միավորին հասցե տրամադրելու ծառայության համար>>՝ 2000 դրամ վճարում, որը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված <<Անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեեստրի ստեղծման և վարման կարգի>> 51-րդ կետի դրույթով /Հասցեի տրամադրումը վճարովի է/:

Քվեարկության կողմ՝ 12, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով որոշումն ընդունվեց:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 12-Ի N 20-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված <<Անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեեստրի ստեղծման և վարման կարգի>> 51-րդ կետի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 37-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով.

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին**

**որոշում է**

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց 2024 թվականի համար գանձվող վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2023 թվականի մայիսի 12-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց 2023 թվականի համար գանձվող վճարների դրույքաչափերը սահմանելու մասին>> N 20-Ա որոշումը:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Հավելվածը կցվում է արձանագրությանը:

<u>Օրակարգ-5</u>

## 5) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N 109-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

Զեկուցողը նշեց, որ որոշման ընդունումը կարգավորվում է <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 34-րդ հոդվածի դրույթներով և հիմք է ընդունվել Անի համայնքի ավագանու 2023 թվականի նոյեմբերի 30-ի N 90-Ա որոշումը, համաձայն որի Անի համայնքի <<Մարալիկի մանկապատանեկան մարզադպրոց>> համայնքային բյուջետային հիմնարկը վերակազմակերպվել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի <<Անի համալիր մարզադպրոց>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության:

Հաշվի առնելով, որ վերակազմակերպումը դեռևս չի գրանցվել Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում, ուստի մարզադպրոցի բնականոն գործունեությունը ապահովելու համար անհրաժեշտություն է առաջացել նշված որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը՝

Որոշման 3-րդ կետից հետո ավելացնել նոր՝ 4-րդ կետ, հետևյալ խմբագրությամբ.

<<4. Որշման N 7 հավելվածը գործողության մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի <<Անի համալիր մարզադպրոց>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից կազմակերպության գրանցման պահից, իսկ մինչ այդ գործում է՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 28-ի N 13-Ա որոշմամբ հաստատված N 7 հավելվածով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի <<Մարալիկի մանկապատանեկան մարզադպրոց>> համայնքային բյուջետային հիմնարկի համար 2023 թվականի համար սահմանված աշխատակիցների հաստիկացուցակը և պաշտոնային դրույքաչափերը:>>:

Քվեարկության կողմ՝ 12, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով որոշումն ընդունվեց:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N 109-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 34-րդ հոդվածի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2023 թվականի նոյեմբերի 30-ի N 90-Ա որոշումը.

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին**

**որոշում է՝**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 21-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի համայնքային ենթակայությամբ բյուջետային հիմնարկների և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների 2024 թվականի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 28-ի N 13-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին>> N 109-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունն ու լրացումը.

1) Որոշման 3-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ

<<3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հունվարի 1-ից, բացառությամբ որոշմամբ հաստատված N 7 հավելվածի>>:

2) Որոշման 3-րդ կետից հետո ավելացնել նոր՝ 4-րդ կետ, հետևյալ խմբագրությամբ.

<<4. Որշման N 7 հավելվածը գործողության մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի <<Անի համալիր մարզադպրոց>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից կազմակերպության գրանցման պահից, իսկ մինչ այդ գործում է՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 28-ի N 13-Ա որոշմամբ հաստատված N 7 հավելվածով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի <<Մարալիկի մանկապատանեկան մարզադպրոց>> համայնքային բյուջետային հիմնարկի համար 2023 թվականի համար սահմանված աշխատակիցների հաստիկացուցակը և պաշտոնային դրույքաչափերը:>>:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

<u>Օրակարգ-6</u>

## 6) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՄՈՒՇԵՂ ՍԱՂԱԹԵԼՅԱՆԻ ԽՆԱՄԱԿԱԼ՝ ՍԵՎԱԴԱ ՍԱՂԱԹԵԼՅԱՆԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

Զեկուցողը նշեց, որ Անիի համայնքապետարան է դիմել Մուշեղ Սաղաթելյանի խնամակալ՝ Սևադա Սաղթելյանը, իր հոր՝ Մուշեղ Սաղաթելյանի բուժման կարիքների համար դրամական աջակցություն տրամադրելու խնդրանքով:

Շուրջ վեց տարի է, ինչ Մուշեղ Սաղաթելյանը բուժում է ստանում Մխիթար Հերացու անվան զինվորի վերականգնողական տանը:

Որոշման նախագծով նախատեսվում է Մուշեղ Սաղաթելյանի բուժման կարիքների համար նրա խնամակալ որդուն՝ Սևադա Սաղթելյանին տրամադրել 250 000 ՀՀ դրամի օգնություն:

Քվեարկության կողմ՝ 12, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով որոշումն ընդունվեց:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՄՈՒՇԵՂ ՍԱՂԱԹԵԼՅԱՆԻ ԽՆԱՄԱԿԱԼ ՍԵՎԱԴԱ ՍԱՂԱԹԵԼՅԱՆԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ, 42-րդ կետերի դրույթներով, հաշվի առնելով Մուշեղ Սաղաթելյանի խնամակալ՝ Սևադա Սաղթելյանի 2024 թվականի փետրվարի 27-ի դիմումը՝ իր հոր՝ Մուշեղ Սաղաթելյան բուժման կարիքների համար դրամական աջակցություն տրամադրելու վերաբերյալ:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին

որոշում է

1. Համայնքի ղեկավարի առաջարկությամբ, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի 2024 թվականի բյուջեի գործառական դասակարգման բաժին 10, խումբ 07, դաս 01 (սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) և տնտեսագիտական դասակարգման 4729 (այլ նպաստներ բյուջեից) հոդվածից 250 000 /երկու հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ հատկացնել՝ Մուշեղ Սաղաթելյանի խնամակալ՝ Սևադա Սաղաթելյանին՝ իր հոր՝ Մուշեղ Սաղաթելյանի բուժման կարիքների համար /Նույնականացման քարտ՝ 1804800570, տրված՝ 30.08.2017թ. 022-ի կողմից, բնակության հասցե՝ մարզ Շիրակ, Անի համայնք, գյուղ Ձորակապ, 8-րդ փողոց, տուն՝ 5/:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

<u>Օրակարգ-7</u>

**7) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՎՃԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՔԱՂԱՔԱՑԻ ԳՐԻԳՈՐ ԱՇՈՏԻ ԱԲԳԱՐՅԱՆԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Զեկուցող՝Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

Զեկուցողը նշեց, որ Անիի համայնքապետարան է դիմել Գրիգոր Աշոտի Աբգարյանը ուսման վարձը վճարելու համար դրամական օգնություն տրամադրելու խնդրանքով: Որոշման նախագծով նախատեսվում է դիմողին տրամադրել 150 000 /մեկ հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ օգնություն:

Քվեարկության կողմ՝ 12, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով որոշումն ընդունվեց:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՎՃԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՔԱՂԱՔԱՑԻ ԳՐԻԳՈՐ ԱՇՈՏԻ ԱԲԳԱՐՅԱՆԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ և 42-րդ կետերի դրույթներով, հաշվի առնելով քաղաքացի Գրիգոր Աշոտի Աբգարյանի 2024 թվականի հունվարի 8-ի դիմումը՝ ուսման վարձը վճարելու համար դրամական օգնություն տրամադրելու վերաբերյալ.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին

որոշում է

1. Համայնքի ղեկավարի առաջարկությամբ, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի 2024 թվականի բյուջեի Գործառնական դասակարգման բաժին 10, խումբ 07, դաս 01 /Սոցիալական հատուկ արտոնություններ /այլ դասերին չպատկանող/ և տնտեսագիտական դասակարգման 4727 հոդվածից /կրթական, մշակութային և սպորտային նպաստներ բյուջեից/ 150 000 /մեկ հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ հատկացնել՝

<<Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ>> հիմնադրամի Մարզչամանկավարժական ֆակուլտետի բակալավրի հեռակա ուսուցման վճարովի համակարգի 1-ին կուրսի ուսանող՝ Գրիգոր Աշոտի Գրիգորյանին՝ ուսման վարձը վճարելու համար /Անձնագիր՝ AS0656293, տրված՝ 17.06.2019թ. 022-ի կողմից, բնակության հասցե՝ մարզ Շիրակ, Անի համայնք, գյուղ Ձորակապ, 6-րդ փողոց, տուն՝ 11/:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Օրակարգ-8

8) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N 108-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկուցողը նշեց, որ համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների կողմից համայնքի բնակավայրեր այցելությունների համար անհրաժեշտություն է առաջացել շահագործել համայնքի սեփականություն հանդիսացող ԳԱԶ 3110 ավտոմեքենան: Տրանսպորտային միջոցը շահագործելու համար անհրաժեշտություն է առաջացել համայնապետարանի աշխատակազմի տեխնիկական սպասարկում իրականացնող աշխատակազմում ավելացնել մեկ միավոր վարորդի հաստիք:

Քվեարկության կողմ՝ 12, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով որոշումն ընդունվեց:

